

## ՏԵՂԱՅԻՆ ՍԵՍԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2007թ. սեպտեմբերի 24-ին ՀՀ ՎՊԽ անդամ Գ. Գևորգյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ընտանիք» ինստիտուտի հետազոտության հաշվետվության ներկայացում» թեմայով սեմինարին,
- ✓ 2007թ. սեպտեմբերի 28-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ աշխատաշուկայի ուսումնասիրության և Գյումրիի աշխատաշուկայի ուսումնասիրության շնորհանդեսին,
- ✓ 2007թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Գևորգյանը, Ա. Աղազարյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Առողջապահության ոլորտի գործունեության արդյունավետության գնահատման զեկույցի և ազգային առողջապահական հաշիվների ներկայացում» թեմայով աշխատաժողովին,
- ✓ 2007թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ պետական կառավարման մարմիններում ԹՎԻՆԻՆԳ և ԹԱՅԵՔՍ գործիքների պատասխանատուների անդրանիկ հանդիպմանը,
- ✓ 2007թ. հոկտեմբերի 26-27-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Աղազարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վերահսկողության և վերլուծության համակարգչային ծրագրի» ճանաչողական սեմինարին,
- ✓ 2007թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ. Միրզոյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության վարչարարական կարողությունների գնահատում» թեմայով կլոր սեղանի քննարկմանը: Թրաֆիկինգի դեմ պայքարի ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման զեկույցի շուրջ քննարկումներին: